

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ԼԵՒՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, ԴՈՒՔ ԼԱՎ ԿԱՆԵՔ՝ ԼՈՒՔ

Posted on April 26, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Սամվել Հովասափյան, Բեռլին, 22 Ապրիլ 2021

Վերջին ժամանակներս անցյալի երեք նախագահները և առհասարակ անցյալ իշխանությունների դրածոները առիթը բաց չեն թողնում տարատեսակ քննադատություններ հնչեցնել նոր իշխանությունների և անձամբ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հասցեին: Նրանք իրենց պատեհապաշտ մոլուցքով, երբեմն կեղծ, երբեմն ուռճացված մեղադրանքներով, անցնում են նաև պատշաճության սահմանները, որը ասես Հայաստանում դարձել է քաղաքականությամբ զբաղվող անձանց պայքարի ձևը, այնպես որ «դողի գագոյի» «անբարոյական վաստակի ծնունդ» դարձվածքը, իր՝ հաղթական արշավով, մուտք է գործել նույնիսկ ԱԺ:

Որ Հայաստանում ներկայումս տիրում է նման քաղաքական վատառողջ մթնոլորտ, որ հերյուրանքներ տարածելն ու բոլորը բոլորի դեմ լինելը, դարձել է բնականոն, ապա կարելի է վստահորեն որակել, որ դա առաջին նախագահի ժամանակ ձևավորված և հետագա երկու նախագահների պաշտոնավարության ժամանակ երկրում արմատացած մթնոլորտի բոլորովին բնական արգասիքն է:

Այո, Լևոն Տեր-Պետրոսյանը լավ կանի, որ լռի, Նախկին ՀՀԾ-ականները և նրա կողմնակիցները պետք է, որ լռեն: Որովհետև նրանք էին, որ այն ամենի հիմքը դրեցին, ինչ որ մենք այսօր ունենք: Նրանք երկրում իշխանություն ստանալու նախօրեին, նախ հիմնահատակ ավերեցին հինը, հայավարի, ինչպես դա կատարվել է նախկինում: Նրանք անհիմն պատճառներով փակեցին ատոմակայանը, Նաիրիտի գործարանը: Բացի այդ, նրանց օրոք էր, որ թալանվել է ԽՀ-ից ժառանգություն մնացած երկրի ազգային հարստությունը, թալանվել են գործարանների պահեստները և շատ որակյալ մեքենաներ, որպես մետաղի ջարդոն, վաճառվել են իրանցիներին, նույնիսկ թուրքերին: Միթե՞ նրանք չէին, որ սեփականաշնորհեցին մի շարք պետական կառույցներ, գյուղացիությանը պատկանող ոռոգելի ջրեր, արոտավայրեր ու հողատարածքներ: Այո՛, հենց նրանք են հիմքը դրել այնպիսի պետականության, որտեղ գալիք իշխանություն բանեցնող անձինք, իրենց թույլ են տվել ամեն ինչ, ամեն մի չարաշահում: Միթե՞ հենց միայն նրանց ապաշնորհության պատճառով չէր, որ նրանք ստիպված՝ չարիքի բունը, Արցախից՝ Հայաստան տեղափոխեցին:

Անցյալ 44-օրյա պատերազմում պարտություն կրելու հիմնական պատճառը եղել են նրանք և հետագա իշխանություններն, իրենց հիմք դրած, թալանի, կեղծիքների, կաշառակերության, ահաբեկչության, սպանությունների դրվածքով, որի պատճառով երիտասարդությունը՝ աշխատող, երկիրը կառուցող, պահող ձեռքերը լքել են հայրենիքը: Արդյունքն եղել է այն, որ 30 տարվա ընթացքում Հայաստանի բնակչությունը ոչ միայն չի ավելացել, այլ պակասել է:

Մոտավոր հաշվարկներով, եթե նկատի առնենք՝ 1990 թվականի ԽՀ-ի բնակչության թվաքանակը, գումարած Ադրբեջանից, Արցախից ներգաղթածներին ու Հայաստանի

պայմաններում բնական աճը, ապա այսօր երկրի բնակչությունը պիտի լիներ 6 միլիոնին մոտ, (եթե ավելի լավատես լինեք, մոտ 7 միլիոն): Չհաշված սփյուռքահայության այն հատվածին, ովքեր պատրաստ էին երկրում օրենքի գերակայության պարագայում, Հայաստան ներգաղթել:

Իսկ այդ 30 տարիների ընթացում, մեր հարևան երկրների՝ Իրանի, Թուրքիայի և Ադրբեջանի բնակչությունները աճել են հարյուր տոկոսով:

«Պետականության ինչպիսի՞ վերակառուցում»:

Ահա, թե՛ յուրայինի ձեռքով, ինչպիսի եղեռնագործությունն է կատարվել Հայաստանի բնակչության և հայության ապագա սերունդների նկատմամբ:

Ահա թե՛ հայությունը ե՞րբ և որտե՞ղ է պարտություն կրել:

Եվ եթե այսպես շարունակվի, ապա անխուսափելի են գալիք պարտությունները: Իսկ դրա համար մեղավոր կլինեն ոչ միայն անցյալի ու ներկայիս իշխանությունները, այլ նաև Հայաստանի վերնախավը ու հեղափոխությունը սատարող կուսակցությունների ներկայիս լիդերները ու նաև քաղաքական դաշտ մտած մտավորականությունը: Այո՛, այն բոլորը, ովքեր չեն կարողանում այս դժվարին օրերին իրար հետ համագործակցության եզրեր գտնել և նրանցից ամեն մեկը, ժողովրդական լեզվով ասած՝ միայն իր գլուռնան է փչում...

There are no comments yet.